



#### 60. ԶԻԳԱՐՈՎ ՊԱՆԸՆ

Մի քյասիբ մարթ ու կնիկ են ըլլամ: Դրանք սրա նրա տանը  
նոքարութին են անըմ, օրեն ըշխատածով իրանց գլուխը պհըմ:  
Կնիկը պատճառավոր ա գառնըմ, նաչարի մարթը աղի հմար փետ  
կտրելիս՝ ծառը վրեն վեր ա ընգնըմ, մեռնըմ: Կնիկը մնըմ ա մե-  
նակ: Խտոր ընգնելու վախտը տենըմ ա, ոչով իրանց գուռը րաց չի  
անըմ, հլե տհե գնըմ ա ծառի տակին նստըմ ա՝ լաց ըլլամ: Յավը  
բռնըմ ա, ըտի էվետ ազատվըմ ա: Հմա նաչարի նութը կտր:սծ ա  
ըլլմ, ըրեխին ծիծ ա տալի, հմա կաթը ո՞րդիանց գա:

Քորփենն որ լաց ա ըլլմ հա, մերը մխկտալով ասըմ ա.—

Նանա՛, նանա՛ Օրսագուվ,  
Պախրենն կգա ծիծ կտա,  
Ջիզար շունենա՛ քիչ կտա,  
Քամին կգա ծաժ՛ կտա,  
Մանգրատերևը փափկոց կլի,  
Լենատերևը ծածկոց կլի:

Էն եղատարը տհե երթըմ ա ու հետն էլ լաց ըլլմ: Տհե որ ոչով  
տեր ու տիրական չի դուս գալիս, իրան նութն էլ կտըմ ա. ֆոքին  
տալիս ա: Եդո ըղորթ պախրենն գալիս ա ծիծ ա տալի, մանդրը տե-  
րենին էլ տակին փափկոց են ըլլմ— լենտերենին էլ ծածկոց են  
դառնըմ, քամին էլ ըրորըմ ա:

էդ վախտը մի թաքավոր իրա գորքերով էկած ա ըլըմ էդ ծմա-  
կը ֆորսի: Պախրին տենըմ են թե չէ, տալիս են սպանըմ: Որ գա-  
լիս են տենըմ պախրի ծիծն էդ ըրեխի բերնըմը, ըրեխի մերն էլ  
կոխկին ֆոքին տված ա, կուռներուն թիւանըմ ա, մնըմ են հուշ  
էլած:

Ասըմ են.— Պախրեն մարթկերանցից ջիգարով ա:

